

## ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Վ. Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՆ ԱՌԹԻՒ

**Ե**ՐԿՈՒՄԻՍ Նախընթաց ամաց էջերէն միոյն մէջ, հարցասէր ազգայնոց բազմաց 'ի գիտութիւն, վաղ իսկ հրատարակուեցաւ 'ի կողմանէ խմբագրութեան՝ թէ ինչ նշանակութեամբ պիտի տօնուէր՝ վերոյիշեալ Մեծ. Հօր քահանայական յիսնամեակը, նորահետ դասակից երկու այլ արդիւնաշատ վարդապետաց յորեւնին հետ, Հրատարակուեցաւ նմանապէս որ հանգէն պիտի կատարուէր գլխաւորաբար կրօնական տեսակիտով, վերջնոյս հետ անբաժան 'ի նկատի ունելով նաև նոցա գրաւորական վաստակքն յօգուտ ազգիս, յ'անուշուեցաւ դարձեալ որ հանգէն տեղի պիտ'ունենար՝ վանական և կամ լաւ ևս ըսել՝ ընտանեկան սահմանաւոր շրջանակին մէջ:

Սակայն այդ ամէն յայտարարութիւնը չգոհացուցին զեռանդուն և ազնուասիրտ ազգայինս, որք ուղեցին իրենց կողմանէ իրեւ վերադիր մի յաւելուլ վանական հանդիսին և հանդիսադրոց, նոցա զգացմանց հետ կցելով նաև իրենց ազնիւ սրտերէն հնչուած եռանդուն արձագանգաց մերձաւոր և հեռաւոր վանդիւնները, ուղղելով զայնս՝ զանազան և իրարմէ բիրաւոր մղոններով անջատեալ հայութեան սրտերէ՝ 'ի խոնարհ կղզեակ Ս. Ղազարու, առ ծերունի հայրենասէր Նաւհայեալն. որ թէպէտ և զժկամակ իւր համեստ զգացմամբ, այլ միւս կողմանէ նաև կամակ հաճութեամբ՝ այս առթիւ տեսաւ հայ ազգիս միասիրտ և աննախանձ եռանդը՝ յարգելու և սիրելու ազնուախոհ զգացմամբ՝ հայրենեաց և գիտութեանց սիրոյ գաղափարականը, իւր սենեկին մէջ մենասէր տընութեամբ՝ հայրենի պատմութեան և աշխարհագրութեան պարապող արդիւնալից անձին վրայ:

Ազգային և օտարազգի օրագիրք և շաբաթաթերթք վաղ իսկ և 'ի զէպ ժամանակի կանխեցին յիւլի հրատարակեցին յորեւնան հանդիսին մանրամասն պարագաները և յորեւնանշնորհ Մեծ. Հօրց հաւատարմ կենսագրերը, չնորհիւ իրենցմէ ուղարկուած ազնիւ նուիրակաց, առ որս մեր կողմանէ չղացուեցաւ մատակարարելու կարեւոր տեղեկութիւնք, ըստ իրենց յատուկ խնդրանաց, Յունիսի 1-15 թուակիր Արևելք, Արձագանգ, Մշակ, Արմէնիա, Պատկեր, Մասիս, և այլն, լրագիրք՝ իրենց ընդարձակ յօդուածներով հետաքրքրողաց փափաքը կրցան յագեցընել այս մասին և նոցա սիրտը գոհացընել, Հետևաբար նոցա յառաջագոյն ըսածն և գիտցածը վե-

ըրստին յեղյեղել Հանդիսիս մէջ, ոչ միայն Հանձնողթ պիտի պատ-  
ճառէր ընթերցողաց, այլ պիտի համարուէր տարածամ կրկնաբա-  
նութիւն և կամ գուցէ անապարժութեան ցոյց :

Ուստի յետ ազգային մամլոյն այնքան մեծաշառաչ յուզման, մեզ  
պատշաճ էր լուութիւն սիրել, եթէ նուիրական պարտք երախտագի-  
տութեան չլռեմ հարկ դնէր մեր վրայ, այլ մանաւանդ փոխադարձ  
զգացմանց բերմամբ չմղէր զմեզ այս համառօտ տողերս գրելու :—  
Բազմալէպ Հանդիսիս խմբագրակիցք՝ յորեւեան հանդիսին առթիւ՝  
իբր յատուկ մասնախումբ՝ հիւրընկալած էր ազգայնոց եթէ նամակօք  
և եթէ հեռագրովք ուղարկեալ յայտարարութիւնները, պարտք  
յանձին ունելով ի հանդիսին ծանուցանելու զայն առ առնախմբող  
հասարակութիւնն և մանաւանդ առ Նահապետն սիրելի, որ նոյն օ-  
րը իւր սիրելագոյն ազգայնոց եռանդեան և մաղթանաց նպատակն  
էր : Արդ, գոհութեամբ սրտի աստ հրապարակաւ կը ծանուցանենք  
որ առ մեզ ուղղեալ ամենայն ուղերձներն և հեռագրեր՝ հանդիսա-  
պէս և ըստ պատշաճին մի առ մի կարդացուեցան յորեւեան հանդի-  
սի ժամանակ. և մեծ սրտի գոհութիւն եղաւ հանդիսականաց տե-  
նել և լսել թէ ինչպէս համազօր սրտից բաբախմունք էին, կրնանք  
լսել, աշխարհիս չորս հակընդդէմ անկիւններէ սփռուած հայ ազգայ-  
նոց եռանդուն մաղթանք և բացատրութիւնք : Այս, հայրենասէր  
Նահապետին յորելինն առթիւ՝ հայրենեաց երջանկութեան փա-  
փաքն էր նիւթ՝ եթէ Ընտոնի, Մէնչազրի, Ճինեւրայի հայուն, և  
եթէ Ախլաթայի, Շամախիի, Հալէպի և Կասպիականին հեռաւոր ա-  
փունքէն (Ղըզլարվատ) հեռագրող հայերուն : Սի և նոյն քնարին  
զգայուն թեւերը կը թրթռացնէին Մոսկուայի, Պետրբուրգի և խար-  
քովի հայերն, ինչ որ նոցա ազգակիցքն փարիզի, Մարսէլլի, Լիվո-  
նոյի, և այլն, Սէնի և Միլերկրականի ափունքներէն, Չկայր ամենեւին  
աարբերութիւն էլմիածնէն, Տփղիսէն, Շուշիէն, Բագուէն, Կարնէն,  
Աղեքսանդրուպոլէն, Երեւանէն, Ղլարէն, Գանձակէն, և այլն, և այլն,  
թռած թռած փափուկ զգացմանց, որքան է. Պոլսէն, Տրապիզո-  
նէն, Ռուսնոքէն, Վառնայէն, Եպէն, և կամ Նարովէն, Հոփմէն,  
Պեռլինէն, Պուտաբշտէն, Վիեննայէն, Պաշաւովէն, Գահիրէն,  
Երուսաղեմէն, Զմիւռնիայէն, Սամոնէն, և այլն, և այլն, մեկնած  
ծաւալած հեռագրաց և ուղերձներու գողտրիկ բացատրութեանց  
մէջ. սակայն ամենուն մէջ մի և նոյն զգացմունք՝ այլ և այլ ազնուու-  
թեան կերպարանօք ներկայացած էին :

Այս ամենայն հեռագիրք և ուղերձք, ինչպէս և պաշտօնական  
թուղթք օրհնութեան Ս. Քահանայապետին Հռովմայ և Գերերջա-  
նիկ Ազարեան Հոգևոր Տեառն և կրօնական միաբանութեանց և ու-  
սումնական ընկերութեանց, պատշաճք էին ներկայացուելու՝ Հանդի-  
սիս էլերուն մէջ՝ մեր ընթերցողաց, այլ մասամբ մի նախնաբար Ա-

րեւելքի մէջ հրատարակուած լինելուն պատճառաւ, և մասամբ մի ժամանակիս պարագաներէն մղեալ, զանց ըրինք իբրեւ 'ի զգուշութիւն . և միայն հետաքրքրողաց համար բաւական կը համարինք գըրողմէլ աստ այն քաղաքաց անուններն, ուստի ուղարկուած էին ուղիւճք և հեռագիրք, ըստ այբուբենական ցուցակիս :

|                 | ԹՊՈՂՔ | ՀՅՈՒՅԻՐ |                  | ԹՊՈՂՔ | ՀՅՈՒՅԻՐ |
|-----------------|-------|---------|------------------|-------|---------|
| Աղեքսանդրապօլ   | 3     | 2       | Նովենդա          | 1     | —       |
| Ախալցիխէ        | —     | 1       | Նիկովիդիա        | 1     | —       |
| Ատանա           | 1     | —       | Նուխի            | —     | 1       |
| Արտանուճ        | 2     | —       | Նախիլի           | 1     | —       |
| Արդուին         | 1     | —       | Շամախի           | 1     | —       |
| Գահիրէ          | 4     | —       | Շուշի            | 1     | —       |
| Գանձակ          | —     | 1       | Պագու            | —     | 10      |
| Կարբանդ         | —     | 1       | Պաթում           | —     | 1       |
| Երեւան          | 1     | 4       | Պալապուով        | —     | 1       |
| Երուսաղէմ       | 1     | —       | Պարտիզակ         | 1     | —       |
| Զմիւռնիա        | 2     | 3       | Պեռլին           | —     | 1       |
| Էյմիածին        | 2     | 2       | Պետրապուրկ       | 1     | 1       |
| Թեսաղոնիկէ      | —     | 1       | Պուտաբէշտ        | 1     | —       |
| Թէոդոսիա        | 1     | 1       | Պուքրէշ          | —     | 1       |
| Լիվոնոյ         | —     | 1       | Ռուսնուք         | 1     | 1       |
| Լոնտրա          | 1     | —       | Սամսոն           | —     | 1       |
| Խարասու         | 1     | 2       | Սիմֆերոպօլ       | 1     | 2       |
| Խարբով          | —     | 1       | Սէն — Լօրան      | 2     | —       |
| Կալկադա         | 2     | —       | Սեբաստիա         | 1     | —       |
| Կեսարիա         | 1     | —       | Սէօլէօզ (Նիկիոյ) | 1     | —       |
| Կարին           | 1     | —       | Սուլինա          | 1     | —       |
| Կոստանցա        | —     | 2       | Վառնա            | —     | 2       |
| Կոստանդնուպօլիս | 22    | 12      | Վենետիկ          | 3     | —       |
| Հաովմ           | 4     | 2       | Վիեննա           | 1     | —       |
| Հալէպ           | 1     | —       | Տրապիզոն         | 6     | 1       |
| Ղալար           | —     | 1       | Տիգրիս           | 4     | 12      |
| Ղզըլարվատ       | —     | 1       | Տիարպէքիբ        | —     | 1       |
| Ճինեւա          | —     | 1       | Փիլիպպէ          | 1     | 1       |
| Մարսիլիա        | —     | 2       | Փարիզ            | 3     | 4       |
| Մէնչըսդըր       | 1     | —       | Քիշնեւ           | —     | 1       |
| Մեխրոպօլ        | —     | 1       | Օտեսաս           | —     | 1       |
| Մուշ            | 1     | —       | Ֆոքշան           | 1     | —       |
| Մոսկուա         | 2     | 2       |                  |       |         |

Ընդ ամէնն 89 թուղթք և 87 հեռագիրք որոց շատերուն ստորա գրեալ անուանք բազմաթիւ են : Եղան և ոմանք օրք ուղարկեցին քերթուածներ և կամ ճարտարութեամբ գծագրեալ ուղերձներ, և կամ շատ կամ սակաւ արժանաւոր յիշատակներ . այս վերջիններէս յատուկ յիշատակութեան արժանի են Մանուէլ Եսայեան Էֆէնտիի օ-

րացոյցն, և Կ. Շահլամեանի շքեղ բանուած Պատկեր Հայաստանի:

Այս ամենայն բարեհաճ կամաց և սրտից ցոյցերու փոխադարձ՝ գրաւոր շնորհակալութեան թուղթեր ուղարկուեցան պաշտօնապէս եթէ Միաբանութեանս Առաջնորդ Արհիպատիւ Արքահօրէն, և եթէ Գերարդղ Ն. Ղ. Մ. Ալիշան վարդապետէն, վերջինս ոչ միայն բազմաթիւ նամակներ ուղարկեց առ բազումս, յորոց ոմանք հրատարակեցան նաև յօրագիրս, այլ և առանձինն ընդհանուր յայտաբարութիւն մի տպագրել տուաւ այս նպատակաւ, զոր փափաքելի է ինձ աստ յեռուլ՝ ոչ միայն իբրև գրականական արժէք ունեցող նամակ մի, այլ և իբր անմոռաց յիշատակ համեստ և միանգամայն ազգային զգացմունքն յարգող ոգւոյ Նախապետին ուղղեալ առ միաձոյլ հայկական բազմաթիւ սրտից աննախանձ միութիւն:

Ողջոյն և շնորհակալութիւմ առ բարեմաղթողս յիմամեայ յոբելիմիս

Երբ երկու տարի առաջ կր հարցրնէին շատք ի ձեռն յրագրաց և առանձնակի, քէ էրք պիտի կատարուի յիշատակ Յոբելիմիս, ժանուցունեցաւ ի ձեռն նոյն շրագրաց քէ քոշականն և քէ յոբելիմի տեսակն, ըստ դիտման Միաբանիցս և առանչ ծա իմ. որ էր Փանանայտընեան յիմանական. քայց Ազգայիւնք մեր ուզեր են աւոր հետ, մանաւանդ քէ ասկէ դուրս, Գրականութեան յոբելեան մի կատարել տալ և հանդիսացրնել. և միով հայրենասիրական հոգեով դրոշալ՝ իրենց քնիկ և գաղթականութեան հետաւոր կողմերէ, ամէն դասէ, կարգէ և սեւէ՝ անհատք և միաբանք, ժամօքք և անծանօքք, անհայտանձ և անխոր, պեսպես օրինակաւ, նոյնիսօք, գրովք, հետագրովք, և լրբագրովք յայտանցին իրենց մտերմական, քանասիրական և ազգասիրական գզացունէլք, մաղթանք, օրննութիւնք, ուղերձք և նուէրք: Որովք ստիպեն զիս թողալ ինձ իմ նախնական փափագս և դիտմունքս, որ էր յիշել զակիզքն և զընթացս Փանանայական յիմանական, իսկ գրաւոր ինչ փաստակցս ուղղել միայն յօգուտ և ի ժամօրութիւն ազգայնոց և ոչ յասիք գովասանութեան: — Այլ երբ այսպէս իբրեւ անգիտարար քար մի ձգելով առ մեծաքանակ և քնդացող զանգուած (հայրենեաց), անկէ այսքան մեծաձայն հնչունք անդրադարձան, որոց ոչ կրնայ յաղթել ճայնս՝ և ոչ հաշտարել իր մէ աւրած արձագանգաց, հարկ է որ անոնց հետ ալ խառնուի. և ծա առանց շատ հեռանալու իմ դիտմանէս՝ յայտնեմ ամէն բարեմաղթողացս, — Յարգելի Ներցանց, Տեսրց և Տիկնայց, Լրագրասիրտաց, Ուսուցչաց և Ուսանողաց, Բարեգործական Փրակական Գարդասար Ընկերութեանց, քաղաքաժողով Հասարակութեանց և Փաղթականաց, և ամենայն քաղականաց, — (որոց չկարցայ կամ պիտի չկարենամ առանձինրն գրով պատասխանել, և որոց անոռանքն և որպիսութիւնը՝ քերես ժանուցանեն օրագիրք), իմ շնորհակալութիւնս, երախտագիտութիւնս և համակրութիւնս. որք երէ շատ չափաւոր երեւին առաջի այնչափ ձոյն և առանելագանց քացատորութեանց Բարեմաղթողացն, ծա ալ իրենց պիտոյ և քաղականութեան անչափութեան դէմ՝ ապաւնն ունիմ անչափ մի. — ՇԱՐՈՒՆԻ: Այդարեւ մեծ պատիւ է ինձ՝ որ կերպով մի զաս պատկերելով կամ քափանցիկ քողով մի պատեշով, իսկապէս նա ինքն ըլլայ և է նպատակն

աւենայն և աւենուստ եկած բօրափուստ զգայուն նետերու, որք ոչ միայն ի կորովի այլ և ի գորովի գրկաց բռան: Որոց աւենեցուն միանգամայն մատուցանեմ խոնարհ և չեմք շնորհակալութիւն և օրհնութիւն, ըստ կարգիս, վիճակիս և հասակիս. այլ և գոհութիւն և խնդրութիւն՝ վասն այսքան ժաշայեալ և ժածանեալ Հայրենասիրութեան, ի փաստ Աստուծոյ և Սրբոց նորա՝ պաշտպանաց ազգիս:

Վենետիկ, Ս. Ղազարոս վանք      Հ. ՂԵՌՈՒՄԻ Մ. ԱԼԻՍԵՅԻ, Մ. ՄԻ:

26 Մայիս = 7 Յունիսի, 1890

Գուցէ ոչ սակաւ ազգայնոց, որոց իտալերէն լեզուն անհասկանալի է, փափաքելի լինէր տեղւոյս լրագրաց սոյն տօթիւ գրածներուն թարգմանութիւնը ընթեռնուլ. սակայն նոյն պատճառն՝ որով զանց ըրինք Ազգայնոց գրութիւնները հրատարակել 'ի թերթիս, կ'ըստիպէ զմեզ նոյն լռութիւնը պահել և ասոնց նկատմամբ:

